

գործածել վճռական կարկառի մը համար, որ յուշարձանէր անոր սերունդը, - դատափետուած, դժբախտ, կեդրոնագուրկ սերունդ, որ հիմա, Սփիւռքի հայերու թըշուառ յուսախաբութեանց համար քառութեան նոխազ ծառայելէ շատ առաջ, է՛ր, իր կարգին, մէկը մեր անշամանդաղ գեղեցկութիւններէն: Մեր պատմութեան դիւաններուն, մենք քիչ անգամ կը հաստատենք- նուիրման մէջ սա զայրացնումը, սրբազան խենթութիւնը, երազը եւ զգայարանքներու միսթիքը, մեր անսասան հաւատաւորութիւնը, որ կ'ազատէ մեզ աւերածի հզօր ազդակներէն: Տոգեկան մեր ռոմանթիզմը, զոր չտառապեցանք հասարակաց ծաղրին ծամօն յայտարարելով: Մեր գիրէն է, որ այսքան ուժ, ազնուութիւն ու արիութիւն ո՛չ միայն չարժանացան արդար արդիւնքին, այլեւ քաղաքական դէպքերու դասաւորումէն գումարուած մեզի դարձուեցան այլանդակեալ, ծաղրանկարային ու ահաւոր չափով մը զգուելի: 1900ին, մեր միտքը, ամբողջութեամբ, ըսել կ'ուզեմ՝ երիտասարդ տարրը այդ մռայլ ձգողութեան մէջ կը տուայտի: Պառակտումը միայն տկարութեան հետեւանք մը չէ, այլեւ ազդակ մը մեծութեան, պատրուակ՝ որպէսզի յօրինուին մեծութիւնները: Յաջորդ տասնեակը, մինչեւ 1924, կնիքին տակն է մարդոց, որոնք Մաթիկին պատմութիւնը ըրեր էին մեր կեանքին ամէնէն խոռով, արիւնամած ու փոփոխակ երկինքը հերկուած յոյսին եւ մռայլ հիասթափումներուն կապոյտ ու սեւ երակներովը, երկու Հայաստաններուն ալ վրայ: Չեմ գիտեր, այն պարագային, երբ աղէտը խնայած ըլլար Մաթիկին, պիտի կրնա՞ր անիկա իր սերունդը համադրել, քանի որ այս վէպը գրուած օրերուն այդ սերունդէն խրլեակներ, հրաշքով ազատուած մէկ-մէկ անկիւն ինքնակորոյս, հագիւ կը յաջողին փշրանքներ փրկել այդ ահաւոր անցեալէն: Ընկեր Մաթիկ ինծի տուաւ անուններ, բոլորովին նոր, որոնք այն ատեն դեռ չէին սրբացած, այսինքն՝ չէին տարագրուած այժմեան աստուածացումին, ինչ որ ընթացիկ բարբառով կը հոմանիչէ ցուրտ